ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/07

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
Մասնակից՝ «Նիկօ-տեկ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Նիկօ-տեկ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Մ. Խաչատրյանի, ներկայացուցիչ՝ Հ. Օհանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՄ-ԳՀԱՊՁԲ-19/24» ծածկագրով գնանշման հարցում, ռադիոսարքավորումների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-19/24»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.01.2020թ.-ի թիվ 26/26-1/529-2020 գրությամբ «Նիկօ-տեկ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 13.01.2020թ. թիվ 39/02-15-08 գրության հիման վրա, 17.01.2020թ.-ին «Նիկօ-տեկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 20.01.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 27.01.2020թ.-ին նշանակվել է նիստ:

ՀՀ կառավարության 23.01.2020թ.-ի թիվ 42-Ն որոշման համաձայն 2020 թվականի հունվարի 27-ի աշխատանքային օրը տեղափոխվել է 2020 թվականի փետրվարի 1-ին:

Հիմք ընդունելով վերոնշյալ որոշումը, 29.01.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 29.01.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 04.02.2020թ.-ին:

2. <u>«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն 13.01.2020թ. թիվ 39/02-15-08 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

««Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն (այսուհետ Գնորդ) և «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Վաճառող) միջև 26.07.2019 թվականին կնքված «ԵՄ- ԳՀԱՊՁԲ-19/24» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում Գնորդին մատակարարել պայմանագրի N 1

հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ «Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի»:

Պայմանագրի կատարման վերջնաժամկետ է սահմանված՝ 31.10.2019 թվականը, սակայն 25.09.2019թ-ին կնքվել է համաձայնագիր,ըստ որի մատակարարման ժամկետը ավելացվել է 30 օրացուցային օրով մինչև 05.12.2019թ:

Քանի որ 05.12.2019թ-ին մատակարարը անձամբ ներկայացել է (այդ պատճառով մատակարարին պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցում չի ուղարկվել) և տեղեկացրել է այն մասին, որ ապրանքների մատակարարումը հնարավոր չէ իրականացնել, ուստի «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն մատակարարի հետ նույն օրը կնքել է համաձայնագիր՝ պայմանագիրը մասնակի լուծելու վերաբերյալ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ գնորդն իրավունքունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը. Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Վաճառողը փաստացի չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն միակողմանի հրաժարվել է կնքված ապրանքի մատակարարման գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ

հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վերոգրյալով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, առաջարկում եմ Վաճառողի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթները:»:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով, Պատվիրատուն ներկայացրել է հայտարարված «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-19/24» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում «Նիկօ-տեկ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, օրենքով սահմանված կարգով հետագա ընթացքը լուծելու համար:

3. <u>«Նիկօ-տեկ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 21.01.2020թ.-ին գրությամբ դիմել է «Նիկօ-տեկ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.01.2020թ.-ի թիվ 26/26-1/529-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացրել է գրավոր դիրքորոշում՝ ներկայանալով նաև հրավիրված նիստին:

Ներկայացված գրավոր դիրքորոշմամբ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

*«Ըստ Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի վկայակոչած հիմքերի, <<**Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի Մետրոպոլիտեն**>> **ՓԲԸ Կարիքների համար ապրանքի մատակարարման թիվ ԵՄ-ԳՀԱՊՁԲ-19/24** պայմանագրով (**այսուհետև նաև՝ Պայմնագիր)** Ընկերության սպանձնած պարտավարությունները՝ վերջինիս կողմից փաստացի չկատարելու հիմքով, Պատվիրատուն միկողմանի հրաժարվել է կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամաբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:*

Գրավոր հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետով, Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարությանը առաջարկել է Ընկերության նկատմամբ կիրառել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթները:

Ուսումնասիրելով Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած գրավոր հիմքերը հայտնում ենք, որ առարկում ենք դրանց դեմ:

I. Գրավոր կարծիքի համար էական նշանակություն ունեցող փաստերը

- *2019 թվականի հուլիսի 26-ին Պատվիրատուի և Ընկերության միջև կնքվել է թիվ ԵՄ-ԳՀԱՊՁԲ-19/24 պայմանագիրը: Ըստ Պայմանագրի, մինչև 2019 թվականի հոկտեմբերի 31-ն Գնորդը պետք է մատակարարի Պատվիրատուին երկու անուն ապրանք՝ թվով 200 հատ <<Ռելե ДСШ-2>> և թվով 1000 հատ <<МБГО 10 մկֆ տիպի կոնդենսատոր>>, որոնց ընդհանուր գինը համաձայն Պայմանագրի կազմում է 26745600 (քսանվեց միլիոն յոթ հարյուր քառասունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:*
- *2019 թվականի սեպտեմբերի 25-ին Պատվիրատուն և Ընկերությունը **(այսուհետև միասին նաև՝ Կողմեր)** փոխադարձ համաձայնությամբ 30 /երեսուն/ օրացույցային օրով երկարացրել են Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման վերջնաժամկետը, որի մասին Կողմերի միջև նույն օրը կնքվել է թիվ 1 համաձայնագիրը:*
- *2019 թվականի դեկտեմբերի 05-ին Պատվիրատուն և Ընկերությունը **<u>փոխադարձ համաձայնությամբ</u>** մասնակի լուծել են Պայմանագիրը, և Պայմանագրի 3.1. կետով սահմանված ապրանքի մատուցման ընդհանուր գինը նվազեցրել են 21360000 (քսանմեկ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամով, այն սահմանելով 5385600 (հինգ միլիոն երեք հարյուր ութսունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ: Նշվածի մասին Կողմերի միջև նույն օրը՝ 2019 թվականի դեկտեմբերի 05-ին, կնքվել է թիվ 2 համաձայնագիրը:*
- *www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում **(այսուհետև նաև՝ Տեղեկագիր)** հրապարակված չէ Պայմանագիրը միկողմանի լուծելու մասին ծանուցում:*

II. Պատվիրատուի գրավոր հիմքերի դեմ առարկության հիմքերը և փաստարկները.

➢ *<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն.*

<<1. Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված (...) պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը (...),>>:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ <<5. Մատակարարման պայմանագիրը համարվում է (...) լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, (...)>>:

Պայմանագրի 8.11 կետի համաձայն՝ <<8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:>>

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ <<Պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, (...) համապատասխան:>>:

Վերը նշված նորմերին համաձայն, Մասնակիցը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե միաժամանակ առկա է երկու պայման, մասնավորապես՝

1. երբ մասնակիցը խախտել է պատվիրատուի հետ կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունը,

2 և խախտման պատճառով պատվիրատուն <u>միակողմանի լուծել է</u> այդ պայմանագիրը:

Ըստ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի պայմանագիրը համարվում է լուծված, երբ պայամանգիրը միկողմանի լուծել ցանկացող պայմանագրի կողմը պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցում է պայմանագրի մյուս կողմին:

Ընդ որում, Պայմանագրի համաձայն՝ Ընկերության կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին Ընկերությունը համարվում է ծանուցված, երբ Պատվիրատուն Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակել է Տեղեկագրում:

Վերոգրյալից հետևում է, որ Ընկերության կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրը կարող է համարվել միակողմանի լուծված, երբ Պատվիրատուն Պայմանագիրը միակողմանի լուծել է Ընկերության հետ և այդ լուծման մասին ծանուցումը <u>հարապարակել է Տեղեկագրում</u>:

➢ *Ամփոփելով վերոգրյալը կարող ենք եզրահանգել, որ այս Ընթացակարգի շրջանակներում Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար անհրաժեշտ է երեք, պայմանների միաժամանակյա առկայություն.*

1. Ընկերության կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստի առկայություն, որը կարող է հանգեցնել պայմանագրի միակողմանի լուծմանը,

*2. այդ հիմքով Պատվիրատուի կողմից ամբողջությամբ կամ մասնակի **<u>Պայմանագիրը միակողմանի լուծելու փաստի առկայություն</u>** և,*

*3. **<u>Տեղեկագրում հրապարակված</u>** Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցման առկայություն:*

Այսպիսով, ուսումնասիրելով Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած գրավոր հիմքերը կարող ենք փաստել, որ դրանցում բացակայում են, վերը նշված պայմաններից առնվազն երկուսը, մասնավորապես՝

- *Պայմանագիրը ամբողջությամբ կամ մասնակի Պատվիրատուի կողմից **<u>միակողմանի</u>** լուծելու հանգամանքը ապացուցող փաստը և,*
- *Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը **<u>Տեղեկագրում հրապարակված</u>** լինելու հանգամանքը ապացուցող փաստը:*

➢ *Իսկ ինչ վերաբերվում է Պայմանագիրը մասնակի լուծելու վերաբերյալ 05.02.2019 թվականին կնված համաձայնագրին, որը Պատվիրատուն վկայակոչել է Ընթացակարգը նախաձեռնելու վերաբերյալ ներկայացրած գրավոր հիմքերում, ապա այդ մասին կարող ենք հայտնել, որ այդ՝ 05.02.2019 թվականին կնքված թիվ 2 համաձայնագիրը եղել է ո՛չ թէ միայն Պատվիրատուի գործողությունների և միակողմ կամքի արտահայտման արդյունք, այլ Պատվիրատուի և Ընկերության գործողությունների և համաձայնեցված կամքի դրսևորման արդյունք: Դրա մասին է վկայում նաև այդ համաձայնագրի տեքստի բովանդակությունը և այն, որ Համաձայնագրի տեքստը ստորագրել են և Պատվիրատուն, և Ընկերությունը: Այդ իսկ պատճառով կարծում ենք, որ Պատվիրատուի և Ընկերության միջև 05.02.2019 թվականին փոխադարձ համաձայնությամբ կնքված թիվ 2 համաձայնագիրը չի կարող դիտվել որպես պայմանագրիը Պատվիրատուի կողմից միկողմանի լուծելու վերաբերյալ գործարք:*

Բացի դրանից 05.12.2019 թվականին Պատվիրատուն չէր կարող Պայմանագիրը միակողմանի լուծել: Պայմանագրի 2.1.7.1. կետի բ) ենթակետի հիմքով Պայմանագիրը միակողմանի լուծելու իրավասություն Պատվիրատուի մոտ կարող էր առաջանալ միայն 05.12.2019թ-ից հետո, այսիքն՝ սկսած 06.12.2019-թ-ից, քանի որ Ըստ Պայմանագրի գնման ժամանակացուցում, 2019 թվականի սեպտեմբերի 25-ին կնվքած թիվ 1 համաձայնագրում և Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետում նշված ժամկետների, Ընկերությունը Պայմանագիրը էականորեն խախտող կարող էր համարվել, եթե Պայմանագրով սահմանված ապրանքները գնորդին չմատակարեր մինչև 05.12.2019 թվականը ներառյալ:

Վերը նշված հաշվարկը կարատարվել է հետևյալ կերպ՝

1. Պայմանագրի գնման ժամանակացույցով ապրանքների մատակարարման համար սահմանված վերջնաժամկետ մինչև 31.10.2019թ..

2. 2019 թվականի սեպտեմբերի 25-ին կնվքած թիվ 1 համաձայնագրով Պայմանագրի գնման ժամանակացույցով ապրանքների մատակարարման համար սահմանված վերջնաժամկետը երկարացվել է 30 օրացույցային օրով, դրա հետևանքով ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 30.11.2019 թ.,

3. Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

➢ *Հարկ ենք համարում նաև անդրադառնալ, 2020 թվականի հունվարի 9-ին Տեղեկագրում Պատվիրատուի կողմից հրապարակած 09.01.2020 թվականի թիվ 39/02-07-*

05 գրությանը (այսուհետև նաև՝ Գրություն): Կարծում ենք, որ գրությունը չի կարող դիտվել որպես Պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանի լուծելու մասին ծանուցում, քանի որ այն կրում է զուտ տեղեկատվություն հաղորդելու բնույթ և բացի դրանից ***<u>Գրության բովանդակության մեջ նշված չէ թե Պայմանագիրը, որ մասով է Պատվիրատուն միակողմանի լուծում</u>****: Գրությունը ուսումնասիրելիս կարելի է եզրակացնել, որ Պաւրվիրաւրուն այդ կերպ միայն տեղեկացնում է, որ 05.12.2019 թվականին Կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ կնքված թիվ 2 համաձայնգրով Պայմանագիրը մասնակի լուծվել է, առանց բացահայտելու թե Պայմանագիրը, որ մասով է լուծվել:*

Հարկ ենք համարում նաև նշել, որ 05.12.2019 թվականին Կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ կնքված թիվ 2 համաձայնագիրը Տեղեկագրում հրապարակված չէ, չնայած որ Պատվիրատուն Գրությամբ հայտնել է թե այն հրապարակվել է Տեղեկագրում:

- *Ելնելով վերոգրյալից կարծում ենք, որ այս Ընթացակարգի շրջանակներում Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավական հիմքերը բացակայում են:»:*

Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և 50-րդ հոդվածի պահանջներով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել են ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Նիկօ-տեկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-LO-2020/07 ծածկագրով, ընթացակարգը:

4. <u>ՍՑ-LO-2020/07 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և «Նիկօ-տեկ» ՍՊԸ-ի միջև 26.07.2019թ.-ին կնքվել է թիվ «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-19/24» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով (այսուհետ՝ Հավելված 1) սահմանվել է ապրանքների մատակարարման ժամկետները, ծավալները և հասցեն:

Հավելված 1-ով մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման օրվանից մինչև 31.10.2019թ.:

Կողմերի միջև 25.09.2019թ.-ին կնքվել է թիվ «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-19/24» ծածկագրով պետական գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին թիվ 1 համաձայնագիրը (այսուհետ նաև՝ թիվ 1 Համաձայնագիր):

Թիվ 1 Համաձայնագրի 1 կետի համաձայն՝ Պայմանագրի թիվ 1 հավելված հանդիսացող տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով՝ մինչև 30.11.2019թ.-ը:

Կողմերի միջև 05.12.2019թ.-ին կնքվել է թիվ «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-19/24» ծածկագրով պետական գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին թիվ 2 համաձայնագիրը (այսուհետ նաև՝ թիվ 2 Համաձայնագիր):

Թիվ 2 Համաձայնագրի 1.1 կետի համաձայն՝ Պայմանագիրը մասնակի լուծվել է, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և հաշվի առնելով Մասնակցի կողմից մատակարարման ենթակա ապրանքները պայմանագրով սահմանված ժամկետում չմատակարարելու հանգամանքը:

www.gnumner.am համացանցային կայքում 09.01.2020թ. հրապարակված թիվ «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-19/24» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և «Նիկօ-տեկ» ՍՊԸ-ի միջև 26.07.2019թ.-ին կնքված թիվ «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-19/24» ծածկագրով պայմանագիրը 05.12.2019թ.-ին կնքված թիվ 2 Համաձայնագրի համաձայն մասնակի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.01.2020թ.-ի թիվ 26/26-1/529-2020 գրությամբ «Նիկօ-տեկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու

հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Պայմանագրի 2.1.5 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար

պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և «Նիկօ-տեկ» ՍՊԸ-ի միջև 26.07.2019թ.-ին կնքված թիվ «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-19/24» ծածկագրով պետական գնման Պայմանագրի Հավելված 1-ով մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելու օրվանից մինչև 31.10.2019թ.-ը:

Կողմերի միջև 25.09.2019թ.-ին կնքված թիվ «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-19/24» ծածկագրով պետական գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին թիվ 1 Համաձայնագրի 1 կետի համաձայն՝ Պայմանագրի թիվ 1 հավելված հանդիսացող տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով՝ մինչև 30.11.2019թ.-ը:

Կողմերի միջև 05.12.2019թ.-ին կնքված թիվ «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-19/24» ծածկագրով պետական գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին թիվ 2 Համաձայնագրի 1.1 կետի համաձայն՝ Պայմանագիրը մասնակի լուծվել է, հիմք ընդունելով

Պայմանագրի 2.1.7 կետը և հաշվի առնելով Մասնակցի կողմից մատակարարման ենթակա ապրանքները պայմանագրով սահմանված ժամկետում չմատակարարելու հանգամանքը:

www.gnumner.am համացանցային կայքում 09.01.2020թ. հրապարակված թիվ «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-19/24» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և «Նիկօ-տեկ» ՍՊԸ-ի միջև 26.07.2019թ.-ին կնքված թիվ «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-19/24» ծածկագրով պայմանագիրը 05.12.2019թ.-ին կնքված թիվ 2 Համաձայնագրի համաձայն մասնակի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Նիկօ-տեկ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, 05.12.2019թ.-ին կողմերի միջև կնքված թիվ 2 Համաձայնագրով Պայմանագիրը մասնակի՝ չկատարված մասով, լուծվել է: Այնուհետև՝ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 և 8.11 կետերի դրույթները, 09.01.2020թ.-ին www.gnumner.am համացանցային կայքում հրապարակել է թիվ 2 Համաձայնագիրը, որպես պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ 05.12.2019թ.-ին կողմերի միջև կնքված թիվ 2 Համաձայնագիրը հակասում է Պայմանագրի 8.10 կետի դրույթներին, որոնց համաձայն՝ Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը: Ընդ որում՝ թիվ 2 Համաձայնագիրը կնքվել է Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո, հիմք ընդունելով Մասնակցի կողմից ապրանքի մատակարարման ժամկետների խախման փաստը, իսկ ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական

հատկացումների նվազեցման վերաբերյալ սույն գործում Պատվիրատուի կողմից չի ներկայացվել որևէ վերաբերելի ապացույց:

Անդրադառնալով Մասնակցի կողմից ներկայացված այն փաստերին, որ 09.01.2020թ.-ին www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված թիվ 2 Համաձայնագիրը, պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցում չէ, քանի որ այն կրում է զուտ տեղեկատվություն հաղորդելու բնույթ և այդ գրությամբ նշված չէ, թե Պայմանագիրը որ մասով է միակողմանի լուծվել, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Գնումների մասին» ՀՀ օրենքի, կողմերի միջև կնքված պայմանագրի և ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ սահմանված չէ պայմանագիրը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցման ձևանմուշ կամ կարգ:

Միաժամանակ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ծանուցման էությունը կայանում է և ուղղված է պայմանագրի միակողմանիորեն լուծելու վերաբերյալ իրազեկելուն, տեղեկատվության տրամադրմանը և բովանդակության ամբողջությամբ հասու լինելուն:

Պայմանագրի 8.10 կետում սահմանված պահանջը միտված է Մասնակցին տեղեկացնելու իր՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների առաջացման կամ ենթադրյալ խախտված իրավունքների պաշտպանության անհրաժեշտության մասին: Ծանուցումը համարվում է միջոց Պատվիրատուի և Մասնակցի միջև փոխազդեցություն ստեղծելու համար, ուստի անձն իրական հնարավորություն պետք է ունենա ծանոթանալու դրա հետ՝ ելնելով պաշտպանության միջոցներն ավելի հասանելի դարձնելու, այլ ոչ դրանք ոչ իրավաչափորեն սահմանափակելու սկզբունքներից:

Բողոքներ քննող անձն ամփոփելով վերոգրյալ դիրքորոշումները, եզրահանգում է, որ թեև օրենսդիրը հստակ չի սահմանում, թե պայմանագրի միակողմանիորեն լուծման մասին ծանուցումն ինչպիսի՞ բովանդակություն պետք է պարունակի, սակայն միանշանակ է այն, որ ծանուցումը պետք է լինի այնպիսի, որ հնարավորություն կտա իրապես պարզելու պայմանագրի միակողմանիորեն լուծված լինելու հանգամանքը, և մասնակցի կողմից ծանուցման հետ ծանոթանալու իրական հնարավորություն ստեղծվի: Այսինքն՝ պայմանագրի կողմ հանդիսացող մասնակիցների համար ծանուցումն իրական հնարավորություն պետք է ապահովի տիրապետելու դրա բովանդակությանը:

Վերոնշյալներով պայմանավորված, հերքվում են Մասնակցի կողմից ներկայացված փաստարկները, քանի որ ինչպես վերը նշվեց ծանուցումն իր էությամբ հենց հանդիսանում է տեղեկատվություն, որն էլ սույն դեպքում առկա է:

Իսկ ինչ վերաբերում է Մասնակցի կողմից այն դիտարկմանը, որ Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին գրությամբ նշված չէ, թե Պայմանագիրը որ մասով է միակողմանի լուծվել, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ այն սույն գործով չունի որևէ էական նշանակույթուն ունեցող հանգամանք, քանի որ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ նախաձեռնված ընթացակարգի էական նշանակություն ունեցող փաստը հանդիսանում է Մասնակցի կողմից պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որն էլ կհանգեցնի պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթը, այն է՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Նիկօ-տեկ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, այն է՝ Պայմանագրով սահմանված ժամկետում չի մատակարարել նախատեսված ապրանքները, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.01.2020թ.-ի թիվ 26/26-1/529-2020 գրությամբ «Նիկօ-տեկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/07 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Նիկօ-տեկ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**